

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ

Տարեկան 12 ծր.

Վեցամսեայ 6 ծր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու քիւր միկ ծրարով

Տարեկան . . . 12 ծր.

Վեցամսեայ . . . 7 ծր.

ԱՍԵՐԻԱ

Տարեկան 2.60 ծրար

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿ

Ծանոցման տողը
20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՈՐԱԿՈՒԻ ԱՍԵՆ ԶՈՐԵՔԵԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՅԵՐ

Rédaction du journal

« le vounk »

VARNA (Bulgarie)

Редакция


на ВѢСТНИКЪ

« вавуни »

ВАРНА

Գրութիւնք եւ տպագրութիւնք

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԻՈՑ ՄԷՋ



Ութը երկար ամիսներու շրջանին մէջ Ձարին ըրած այլ եւ այլ յայտարարութիւնները ու խոստումները, երկրին մէջ կատարուած երեսփոխանական ընտրութիւնները, Տումայի բացման առթիւ Նիքոլա Բ. ի տնօրինութեամբ կատարուած մեծահանգէս արարողութիւնները եւ իրարտասանած մեծաբառաւ ճառախոսութիւնը ժողովրդեան ներկայացուցիչներու առաջը, ասոնց ամենը կերեւայ որ թատերական զանաւանդ մը նէր, որ գաղտնի խորհրդակցութեամբ եւ որոշմամբ Ձարն ու իր յետադիմական խնկարկուք ուղած էին խաղալ Ռուս ժողովուրդը եւ անոր հետ մեկտեղ ամեն քաղաքակրթեալ ազգերը խաբելու համար։ Այլ եւ տարակոյս չկայ որ Ձարը չարաչար խաբեց իր խելոյ ժողովուրդը որ ամէն օր ապստամբական բուռն ցոյցերով բարձրաձայն կը պահանջէր ազատութեանց ներմուծումը, եւ դիւանաբանական կառավարութեան մը կատարեալ ջնջումը։ Խաբեց, որովհետեւ ճարտնէ ստացած ամենաբուռն ապտակները իր գորութիւնը չլատած ըլլալով անկարող կը գտնուէր երկրին չորս կողմը բռնկած հըրդեհը զինու զօրութեամբ մարելու տակ մտածեց որ խաբէական շլացուցիչ սին խոստումներով ու խօսքերով չոյէ, փայփայէ եւ քրնացնէ իր աղքատ, միջին եւ քրն մը սթափի, ոյժը գտնայ եւ նորէն իր ժողովուրդը ամենայն խստութեամբ ու բրտութեամբ գետնահարէ ու ջանջախէ։

Իսկ միւս կողմէ խաբեց Եւրոպան մանաւանդ իր դաշնակից Ֆրանսան, որպէսզի քր երկու միլիոն ֆրանքի փոխառութիւնը կարենայ կտտարել։

Եւ արդարեւ ինչ կը տեսնենք այսօր Ռուսաստանի մէջ, ոչինչ յուսատու, այլ յետին չար քան զառաջինն ամեն բանի մէջ։ Ո՛ր եւ այն մեծ մեծ տղատութիւնները,

որ ժողովուրդը պիտի ունենար խօսելու, գրելու եւ հաւաքուելու համար, ո՛ր եւն ազգը ժողովրդային ձայնով ու կամօք կտտար վարելու համար Ձարին ըրած զոհողութիւնները ու տուած արտօնութիւնները։ Ահա հազիւ ամիս մըն է որ Տուման բացուեցաւ ու ոչ միահեծան Ձարը, եւ ս'չ երկրին գիւնաբանական իշխանութիւնները մազի չափ չեն ուզեր չեղիլ իրենց բռնաւարական արարքներէն եւ համակերպիլ ժողովուրդի ընտրած երեսփոխական մարմնոյ ո՛ր յայտնած մի փափաքին, մի առաջարկին։

Մեր «Իրաւունք» ընթերցողք արդէն իսկ կարդացին այս սիւնակներու մէջ նախարարապետ Կորեմիքինի կարգացած մի յայտարարութիւնը, որով Ձարն ու իր յետադիմական կառավարութիւնը բացէ՛ իրաց մերժած էին ամեն այն առաջարկութիւնները որ Տուման ներկայացուցած էր Ձարին։

Արդէն իսկ այն օրը՝ որ Կորեմիքին իր խորիտ յայտարարութիւնն ըրաւ Տումայի մէջ, իսկոյն հասկցուեցաւ որ Ձարին մեծամեծ խոստումները ջուրն ինկած էին, եւ Ձարական նօն բոստանը պիտի կաշկանդէր երեսփոխանութիւնը ու արգելք ընէր անոր ամեն յաջած բարենորոգմանց գործադրութեանց։

Ուրեմն զարմանալու չէ եթէ լրտգրաց եւ հոռագրաց մէջ սա վերջին օրերը վերստին սկսանք կարգալ նորանոր ժողովրդային ցոյցեր ու դժգոհութիւններ, պաշտօնատարաց սպանումն եւ մեծ անկարգութիւններ, քայնդումն եւ տեւրում ամեն կողմ, իսկ ոստիկանական ու զինուորական իշխանութեանց կողմէ միշտ առաջուան պէս բուռն ճնշումներ, անխնայ ջարդեր, եւ յարատեւ ապօրինի բանտարկութիւններ։

Իրաց այս տիւր ու սոսկալի վիճակը ո՛ր պիտի մզեն զՌուսիա, միթէ՞ հոն՝ ուր տարին ֆրանսայի մեծ յեղափոխութեան ատեն միեւնոյն խաբեքայ եւ յիմար քաղաքականութեան հետեւող Լուի

ժ2. ը, Ասիկայ կըսենք, վասնզի տակաւին չէ հասկցած կամ հասկնալ չուզեր Ձարը որ ո՛ր եւ բռնական միջոց ինչ ձեւով ալ որ ի գործ դրուի, չկրնար երկար հակառակիլ ու դիմանալ երկրի մը ժողովրդային հաւաքական կամացը։

Արդէն ահա նորէն ժողովրդային խլրտումները եւ շարժումները ծայր տուած են։ Միակողայէ քաջուած հեռագրի մը նայելով, վերստին գործադրական գործադուլներն սկսած են, եւ բնակիչներէն շատերը ահու մէջ ինկած քաղաքէն կը մեկնին։ Օրէնպուրկի բանտին մէջ եղող քաղաքական կալանաւորները ազատելու համար ժողովուրդը բանտին վրայ յարձակած ըլլալով՝ կազակներու հետ մեծ ընդհարում մը տեղի ունեցէր է, երկու կողմէ բազմաթիւ անձինք սպաննուէր եւ վիրաւորուէր են։ Վիսանբորդ Դարոլրագիրն ալ կըսէ թէ Բուրսք քաղաքի պահպան զօրքերը ամբողջովին ապստամբած են։ Եթէ զօրաց ապստամբութիւնը մի քիչ ընդհանրանալու ըլլայ, ինչպէս կը յուսացուի, ահա՛ այն ատեն է որ Ձարը իր սխալ քայլ առած ըլլալը պիտի ճանաչէ։

Առ այժմ յետադիմական կուսակցութիւններն պետական հարուած մը պատրաստելու վրայ են Տուման տապալելու համար։ Այս մասին մեր ընթերցողաց ուշադրութիւնը կը հրաւիրենք հետեւեալ նամակի վրայ որ Բեթերս պուրկէն գրուած է, եւ բաւական կը լուսաբանէ խնդրոյ ուղարկայ եղող կէտերը։

«Պէտք չէ խաբուիք, գուցէ շատ մօտալուտ է Պետական հարուածի մը երեւումը։ Տուման իւրաքանչիւր օր մտնող երեսփոխաններուն մէջ շատեր կան որ իրարու կը հարցնեն թէ երեկոյին ազատ համարձակ կա՞մ գէթ ողջ դուրս պիտի կրնա՞ն ելնել։ Հոս ամենաեղբարական ձայներ կը պոտին։ Իրարու ականջէ կը բսբսան թէ պետական հարուածը մօտ է, եւ այս պետական հարուածը ոչ թէ կալսեր կողմանէ պիտի ըլ-

լայ, այլ ծայրահեղ պահպանողականաց կուսակցութեան կողմանէ՝ ի գործ պիտի դրուի կալսեր գէթ։ Կը յիշէ՞ք որ Պօլսու Ա. Կալսըրը պալատականաց ձեռքով մորթուեցաւ քիչ մը չափազանց ազատական ըլլալուն համար։

«Ես չեմ կարծեր որ ասոր նըման մեր ծայրայեղներն ալ այնպիսի գարշելի մահափորձ մ'ընեն։ Սակայն ես լաւ գիտեմ թէ շատեր կան, որ բնաւ խելոյ չընելով մեծ ախորժանօք կը փափաքին որ զինուորական յեղափոխութիւն մը ծագի, որով Նիքոլա Բ. ստիպուի հրաժարիլ եւ անոր տեղ դնեն մի այնպիսի անգութ տիկթաթոր մը, որոյ անունը արդէն հոս բերնէ բերան պտտելու վրայ է։»

Մեր ընթերցողաց կը յանձնարարենք այսօրուան հեռագրական բաժնի վերջին հեռագիրները կարգալ ուշադրութեամբ։

ՏՕՔԹ ԼԵՓՍԻՈՒՍԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ



Ահաւասիկ յիշեալ շահեկան բանախօսութեան վերջին մասը, որոյ մէջ Մ. Լեփսիուս մեր ազգին գովելի յատկութիւնները ի վեր կը հանէ խիստ համակրական խօսքերով։

«Ես շատ խորհած եմ նաեւ Պարսկաստան անցնող հայերու վիճակին վրայ։ Նեղութիւնն է որ ժողովուրդը կը հեռացնէ իր բնիկ երկրէն, հաստանի ներսերը ժողովրդին մեծ մասը երկրագործ է, եւ ասոնք բնականաբար աւելի ետ կը մնան քաղաքակրթութենէ եւ գիտութենէ։ Այս առթիւ յիշեմ կէտ մը որ մեզի շատ գծուարութիւն պատճառեց։ Երբ եւրոպացիք Ասիա գան՝ կը տեսնեն որ գործնական առեւտուրը շատ տարբեր է քան յեւրոպայ, եւ կան ոմանք որ քանի մը անհատներու առեւտուրի մէջ ունեցած խաբէական ընթացքին համար ամբողջ ազգը գէշ կը նկատեն. բայց ասիկա ուղիղ չէ։ Եւ գիտենք որ ամբողջ Հայ ազգը երկրագործ է Հայաստանի մէջ, եւ քանի մը բաներ

կը պահսին իրեն համար :

«Հայր, բաղդատելով Ստեփանն աշխարհի ազգաց հետ՝ շատ յառաջդիմած էր, եւ այս բանն է որ ոմանց աչքին անտանելի եւ վտանգաւոր կը նկատուի : Ասիա անցնելուն մէջ արհեստից եւ ճարտարութեան մասին շատ յառաջդիմ էր. հիմա ամեն բան ինկած է հոն, եւ շատ մը ձեռագործներ փոխանակ երկրին մէջ շինուելու՝ դրսէն կը բերուին : Այս մասին մտածելով ես որոշեցի այն տեսակ օգնութիւն մը ընել Հայերուն որ կարենան իրենց երկրին մէջ գործել եւ իրենց աշխատանքով ապրիլ. եւ ասոր համար է որ մեր հաստատութիւնները արհեստանոցներ ընդ : Զեզմէ շատերը Ամերիկա գացած ըլլալու են : Կար ժամանակ մը որ Ամերիկան եւրոպայէն կտանար իր ապրանքները . բայց հիմա՝ ... : Համոզուած եմ որ Ասիան ալ պիտի յաջողի այդ բանի մէջ : Ժողովուրդ մը որ գործունեայ է, եւ առաքելութիւններ ունի, որ աշխատասէր է, տոկուն է, խնայող է, հաւատարմ է հնարամիտ է, — անպատճառ ապագայ ունի : Ինկած մարդը իր ապագայի յոյսով կը միութարուի. ազդասէր մարդն ալ իր ազգին ապագային վրայ պէտք է հաւատք ունենայ : Եւ հաւատքով կը գործածէ իր ոյժերը. եւ ապագան կը բռնէ պինդ կերպով : Իբր թէ անիկա ներկայ եղած ըլլար : Եթէ Հայը փոխանակ ուրիշներէն բան սպասելու Աստուծոյ վստահի եւ իր ձեռքերը գործածէ՝ կը հաւատամ որ Ասիոյ ազգերուն առաջինը կըլլայ : Ապագայ քաղաքականութիւնը ինչ որ ալ ըլլայ՝ Հայը իր որոշ գիրքը կուենայ պատմութեան մէջ : Ամեն անհատ կըրնայ օգնել այս բանի յաջողութեան : Իբրեւ օրինակ յիշեմ որ մենա-մարտի կամ ոստանալի մրցողները սովորութիւն ունենին պահ մը սպասելու, իրենք զիրենք զսպելու : Հայուն համար ալ պիտի գայ մրցելու օրը . պէտք է պատրաստ ըլլալ. պէտք է կատարելագործել ոյժերը. ինչպէս որ ջիղերը՝ այնպէս ալ հոգեկան եւ իմացական կարողութիւնները վարժուելու են : Իս այս սկզբունքով կը շարժիմ : Ուրֆայի մէջ խալիի յատուկ գործարան մը հաստատած եմ. իսկ Ուրմիոյ մէջ՝ ատաղձագործութեան : Ինծի դէմ տրտնջողներ կրնան ըլլալ եւրոպայի մէջ ալ . անոնց պատասխանելով կըսեմ . «Ես կը ճանչնամ

հայ ազգը» . որովհետեւ կը անձնեմ որ այս ազգը արթնցած է . իր մէջ միութիւն ունենալու վրայ է, եւ մեծ ապագայի մը պատրաստուիլ սկսած է : Ես մեծ բան չեմ լուսար այն քաղաքական խորհուրդներէ որոնցմով կըրտղին ոմանք . սա գիտեմ որ գործունեայ ազգ մը ի զիրքը պիտի գրաւէ : Պէտք է որ ամեն հայ անհատ աշխատի, գործէ, իր ձեռքերը մշակէ : «Պօքս վերջացնելէ առաջ պիտի յիշեմ զէպք մը որ խոր տպաւորութիւն թողած է մտքիս վրայ : Ուրֆայի Մայր-Եկեղեցւոյն մեծ աղէտէն քանի մը օր վերջը իմաստուն մահմետական կին մը իր թաղին իմամը կանչելով անոր կը պատմէ իր տեսած հետեւեալ երազը . «Տեսայ խոշոր աման մը որուն մէջ հաստատուած էր մերկ արմատով ծառ մը . ծառին վրայէն ջուր կը հոսէր, եւ ամանը հետզհետէ կը լեցնէր : Զուրը բարձրանալով ծառը մէկ կողմ ծոցեայ, եւ այնպէս զգացի որ եթէ ջուրը մինչեւ ամանին բերանը լեցուէր՝ ծառը պիտի իյնար » :

«Երբ իմամը այս երազին մեկնութիւնը հրցոց՝ կինը պատասխանեց անոր . «Զուրը Հայուն արցունքն է, ծառը թիւրքն է . եթէ չգաղութեանք արցունքին հոսումը՝ ծառը պիտի իյնայ : Ես կը կարծեմ թե արդէն բաւական ջուր լեցուած է ամանին մէջ » : Ես շատ մը իսլամներէ ալ լսած եմ որ իրենց դրացիներուն հետ խաղաղ ապրիլ կը ցանկան : Պիտի դայ ժամանակ որ կրօնքը ատելութիւն չը պիտի արթնցնէ : Իրենց հաւատքին համար ոչ ոք տուող երէցները եւ աշխարհականները մեծ պատիւ կը բերեն ձեր ազգին . եւ ասոր համար կրնամ ըսել որ Հայը իր հաւատքին շնորհիւ պիտի փրկուի եւ իր արժանաւոր տեղը պիտի գրաւէ :

(Երկար ծափահարութիւններ .)

Մ Շ Ա Կ

Օրաթերթ քաղաքական, գրական
Բաժնեգրին՝ Եւրոպայի համար 30 ֆր.
Ամերիկայի համար 6 տոլար, Պարսկաստանի եւ Ռուսաստանի համար 10 րուպլի տարեկան :

Հասցէ՝ Խլքագրութիւն «ՄՇԱԿ»-ի
(Կովկաս) Թիֆլիս

պէկի մը տունը կը գտնուէր : Ես յաջողեցայ փախցնելու : Հիմակ կը ջանամ իր ծնողքը փնտռել ու հոն տանել... ահա՛ բոլորը :

—Աստուած կեանքդ աւելցունէ, կտրի՛ճս, վրայ բերաւ անտառապահը : Գոնէ յաջողեցա՛ր գտնելու :

—Դեռ ո՛չ ...

—Աղջիկը չը գիտե՛ր իր գեղին ու ծնողքին անունները :

—Գիտէ ... բայց ծնողքը կոտորածի ժամանակ փախած են ու անոնց ո՛ւր երթալը յայտնի չէ՛ :

—Ախ, ատիկա է՛ն դժուար բանն է ... կարելի է կա՛մ Ռուսաստան եւ կա՛մ թէ Պարսկաստան անցած են : Ի՛նչ որ է, եթէ չը կարենան գտնել տոյ աղջկան ազգականներէն մէկը, չըլլայ որ երեսի վրայ թողուս, ես մէկը չուենիմ, տո՛ւր ինծի քովս կառնեմ ու զաւկիս պէս կը մեծցունեմ զինքը : Կը տեսնե՛ս այս գետնափոր խրճիթս ... ա՛նոր մէջ մարդ մը չկրնար մտնել : Հանգիստ կեանք մը կուտամ այդ աղջ-

ՄՈՒԽԹԱՐ ՓԱՅՍ

«Թայմը» կառավարական օրկանը իր մայիս 14 ի խմբագրականին մէջ հետեւայ ուշադրաւ յայտարարութիւններ կընէ .

«Խնդիր մը կայ որ պէտք է անյապաղ կազմագործել, ատի՛ Եգիպտոսի օսմ. Գոմիսէրին հանգամանքն է : Մուխթար բաշայի լարած ու պատրաստած զրգուռները՝ ընդդէմ Անգլիոյ, շատ տխուր հռչակ մը հանած են, եւ իր այդ ընթացքով բացարձակապէս անկարելի է որ Մուխթար բաշա Գահրէ մնայ, իբր ներկայացուցիչ Սուլթան Համիտի : Այն օրէն, ուր մեր գիւտնագրական գործունէութեամբ, մեր կրտսերին Գործոց նախարարին ըլլած տոյտարարութիւններով, եւ ամենէն աւելի, մեր նաւատորմը շարժման մէջ դնելով ցոյց տուինք թէ չենք հանդուրժիր իր Եգիպտոսի անգլիական ազդեցութիւնը ակա . բացելու փորձեր ըլլան նոյն իսկ շատ բարձրէն, այն օրէն եղաւ ինչ որ կ'ակնկալուէր արդէն : Բայց օսմ. Գոմիսէրին եւ իրեն գործակից մարդերը չէ յանցանքը, եթէ իրենց ջանքերը յաջող արդիւնք մը չուենցան : Մուխթար բաշա եւ իր գործակիցները շատ գէշ կերպով աշխատեցան գործունէութեան մոլորեցումները քննարկելու համար այնպիսի երկրի մը մէջ, ուր ինքը գիւտնագրական բարձր եւ պատասխանատու գիրք մը ունի :

«Եգիպտոսի համալսարանական թերթ մը վերջերս կը ծանուցանէր թէ օսմ. բանակը Աղէթսնդրիա ցամաք ելած է եւ խանդավառ ընդունելութիւն մը գտած է ամբոխին կողմէ, այս լուրին հրատարակութիւնը կ'ապացուցանէ թէ համալսարանական կուսակցութիւնը ինչ ոճագործ յիմարութիւններ գործելու ընդունակ է : Մեծապէս փափաքելի է որ այս յանգուցն գրգռանց հնգինակնորը պատժուէին. միւս կողմէ, Տաճկաստանի ներկայացուցչին ալ նոր առիթ մը տրուելու չէ, ապագային մէջ նմանօրինակ եկերիկներ լարելու համար :

«Կ'ենթադրենք որ Բ. Դուռը՝ ի նըպատ իր շահուց՝ ինք պիտի ըմբռնէ այս ճշմարտութիւնը, եւ պիտի փութայ Մուխթար բաշան արձակելու իր պաշտօնէն, ըստ որում Մուխ-

թար փաշա իր ձեռքով ինքզինքն անկարող ըրած է իր պարտականութեանց կատարման : Այս սահմանագրի թնդիրը թէ՛ Սուլթանին եւ թէ՛ մեզի համար օգտակար դասեր կը պարունակէ : Սուլթանը եւ իր խորհրդատուները պէտք է այլեւս համոզուին թէ, Անգլիոյ մէջ ինչ կուսակցութիւն որ ալ գործի գլուխ անցած ըլլայ, մենք վճռականապէս որոշած ենք Սուլթան Զրաքին եւ Եգիպտոսի վիճակը անվար պահել :

«Գալով մեզի՛ անգլիացուց քաղելիք դասին, Աքապայի խնդիրը ցոյց տուաւ թէ ի՛նչ է ներքին իրական ծրագիրը այն երկաթուղւոյ խաղախ կանուխեան. զոր Ապտիւլ Համիա ըսկսած է գործադրել, իր գերման գիտնորական խորհրդատուներուն զբոստումով, եւ զոր յոռաջ կը տանի՝ համաձայն գերմանական ծրագիրներու, եւ օժանդակութեամբ զբաւական կամ այլ գերման ոյժօրու : Շատ փափաքելի է որ այս իրողութիւնը յայտնուէր հասարակութեան, զի ընդունելի ձեւով մը, եւ մինչ այդ քաղաքականութիւնը հասունցած չէ տակաւին : Բայց հիմայ պէտք եղածին չափ յայտնուեցաւ ամէն ինչ, յանցանքը մերը պիտի ըլլայ, եթէ այս դուռ մոռնանք կամ Սուլթանին թոյլ տանք որպէսզի գլուխ հանէ իր ուղղակի տական ծրագիրները՝ ընդդէմ Անգլիոյ, մահմետականութիւնը յառաջ տանելու պատրուակին տակ : »

«ԼՈՒՍԱԲԵՐ»

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Սրտի անհուն բերկրութեամբ իմացած ըլլալով արդէն Մուրատի [Պոյաճեան] աքսորավայրէն ազատած ըլլալը, այսօր հաւաստի աղբւրէ կը տեղեկանանք թէ՛ ինք հին Հնչակեան կուսակցութեան կեդր. վարչութեան ատենապետը եղած է այժմ :

—Պուրդէի կարգ մը երիտասարդներու մէջ խանդավառ գործունէութիւն մը կը տեսնուի տեղւոյն ազգ. վարժարանը վերաբանալու նպատակաւ : Բաղձալի

բուրեց անոր ս. աջն ու հարցուց .

—Վարսենիկ քնացած է :

—Հայա՞մ ... անուշ անուշ կը մշայ : Բայց ձեր երթալէն ի վեր երկու գիշեր շարունակ անքուն մնաց ու սպանց :

—Խեղճ աղջի՛կս ... միմիջեց կարկա Ախպէր : Գոնէ՛ հանգիստ անցուց, սրբազան հայր :

—Է՛հ, գոյնը բաւական վրայ եկաւ : Այսօր աղէկ ալ ճաշեց : Բայց գուն ի՛նչ ըրիր ... գտա՛ր ծնողքը :

—Անկարելի եղաւ. գեղացիները չը գիտեն ո՞ր երթալին :

—Ազգականներ ալ չունի՞ :

—Կան, սակայն իրենց հոգիի վախէն չեն համարձակիր տուններին ընդունիլ :

—Ուրե՛մն :

—Պիտի խնդրէ՛ր որ ժամանակ մըն ալ դեռ Զեք Սրբազնութեան քովը մենայ արեւօք կընդունի՞ :

—Խնդիրը թո՛ղ հոտ հասնի ... Ինչչալ տեղ ընդունիմ ... բաւական է որ աղջիկը չը հայր ի այս մենաւորիկ խուցին մէջ :

Ա. ԵՐԵՄՆԵԱՆ

ՍԱՐԻՊ ԱՆՊԵՐ ...

(Շար. նախորդ թիւէն)

Կարիպ Ախպէր հասկցաւ թէ անտառապահը ճշմարտութիւնը կը յայտնէր. հետեւաբար անոր ձեռքը բռնեց ու ըսաւ .

—Նայէ՛ . դուն սա տոճարին առջեւ կերդնուս գաղտնի պահել այդ անմեղ ու միանգամայն ինկած աղջկան մասին խօսածներս, անանկ չէ՞ :

—Այո՞ ... չեչտեց Աւագ անտառապահը :

—Ուրեմն մտիկ ըրէ՛ . այդ մանկատի աղջիկը ճիշդ է որ ես ճերբած եմ ու Վանահօր պաշտպանութեանը յանձնած եմ չարս օրէ՛ ի վեր : Անիկա Դուրտ

է որ թաղ խորհուրդը գիւրու-
թիւններ ընծայէ երիտասարդու-
թեան այս գովելի ձեռնարկին,
որուն յաջողութենէն կախում
պիտի ունենայ Պուգրէշի հայու-
թեան ապագան: Հարկ է որ
թաղ խորհուրդը նորոգութեանց
ծախքերէն մաս մը այս տարի
վարժարանին յատկացնէ: Իսկ ե-
րիտասարդութիւնը պէտք չէ որ
յամառի իր ալն պնդումին մէջ
թէ՛ ապագայ վարժարանը քոյր-
բայիկն անկախ ըլլայ թաղակա-
նութենէն: Կրթական կամ ու-
սումնական գործին մէջ կրնայ
անկախ ըլլալ բայց հաշուական
գործերու մէջ պէտք է համարա-
տու ըլլայ թաղականութեան,
քանի որ երկրին օրէնքը միայն
թաղ խորհուրդի կարտունէ եկեղեց-
ւոյն կից վարժարան մը ունենալ:
Երկու կողմի ետեւութիւնները
պէտք է տեղի տան այս էական
գործին առէն:

—Ռուսիոյ Ռոստով քաղաքէն
Մշակ ին ուղղեալ նամակ մը կը-
սէ թէ Բեսարաբիոյ հայոց առաջ-
նորդ խումարէրտեան Ներսէս
Արքեպիսկոպոսը Թէոդոսիայի հայ
ժողովուրդը հոգեպէս մխիթարե-
լու փոխարէն, այնչափ վրդովե-
ր է անոր հոգեկան կեանքը, որ
յիշեալ եպիսկոպոսի անունն ան-
գամ ժողովուրդը չուզեր լսել ե-
կեղեցւոյ մէջ:

Թղթակիցը կըսէ՝ որ չէր տե-
սեր առաջնորդ մը՝ որոյ անունը
այնչափ զգուշի գառնար ժողո-
վուրդի համար:

Թէոդոսիայի մէջ Ներսէս ե-
պիսկոպոսը չորս ամիս շարունակ
փակել տուեր է եկեղեցիները,
որով ժողովուրդը մեծ ու փոքր
զրկուեր են Հաղորդութենէ և
Մկրտութենէ: Մեռնող ազգայինք
առանց քահանայի եւ եկեղեցա-
կան արարմանց թաղուեր են,
տեղւոյն քահանան ուստիկանու-
թեան և զինուորական իշխանու-
թեանց ձեռքով երկու անգամ

աքսոր գացեր է, և այլն: Մի
խօսքով Ներսէս եպիսկոպոս ո՛չ
Սինօդ, ո՛չ էջմիածին և ո՛չ ժո-
ղովուրդ կը ճանաչէ եղբր:

—Կ. Պօլսոյ Գարակէօմրիւքի
թաղին Չարխաբան Վ. Աստու-
ծածնի եկեղեցին, որ բաւական
տարիներէ ի վեր այրած ըլլալով
վերաշինութիւնը գրեթէ անկա-
րելի եղած էր դարմի պակասու-
թեան պատճառաւ, այս անգամ
կիմանանք որ Կարադեան եղբարք
յանձն առած են ի նորոյ կառու-
ցանել յիշեալ եկեղեցին իրենց
անձնական ծախիւք ի յիշատակ
իրենց ողբացեալ եղբոր Լեոն էֆ.
Կարադեանի:

Կ Ո Վ Կ Ա Ս Է Ն

Տալիք (Կոչ) անունով կէսը թուր-
քերէն եւ կէսը հայերէն օրաթերթ
մը պիտի հրատարակուի մօտեւ ի
Պազու, որոյ նպատակը պիտի ըլլայ
հայ եւ թուրք ազգաց մէջ հա-
մերախնութիւն մը հաստատել:

Տուժայի անգամ ընտրուած են՝
Երեւանէն՝ Գեղամ Տէր-Ներսէսեան եւ
Լեւոն Թումանեան, Գանձակէն՝ Բոխիկ
Իրիսուսփոր Բանթրեան:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Եթէ ընթերցողը հետաքրքիր է գիտ-
նալ թէ ի՞նչ կզան սա վերջին տասը
տարուան մէջ այլ եւ այլ վեհապետ-
ներ եւ նախագահներ սպաննող անար-
չիստները, ահա թող կարդայ ու հաս-
կնայ:

1894 ի Յունիսի 24 ին՝ Ֆրանսայի
Հանրապետութեան նախագահ Բարնոն
սպաննող Բազէրիօն՝ Կիօթինով գըլ-
խատուեցաւ:

1898 ի Սեպտեմբեր 10 ին՝ Աւստրիոյ
Էլիզապէթ կայսրուհին սպաննող Լու-
քէնին՝ մշտատեւ բանտարկութեան դա-
տապարտուեցաւ:

1900 ի Յունիս 29 ին՝ Իտալիոյ Ում-
պէրթօ Թադաուրն սպաննող Պրէսթին՝
մշտատեւ բռնի աշխատութեանց դա-
տապարտուեցաւ ու 1901 ի Մայիսին
բանտին մէջ անձնասպան եղաւ:

1900 ի Օգոստոսի 2ին Պարսկաց Նաս-

րէտտին Շահը սպաննող Սալսօնը՝ մըշ-
տատեւ բռնի աշխատութեանց դատա-
պարտուեցաւ:

1901 ի Սեպտեմբեր 6 ին՝ Միացեալ
Նահանգաց նախագահ Մաքքինլին ըս-
պաննողը երկկտրական մահուամբ պատ-
ժուեցաւ:

Եւ ահա վերջապէս ներկայ 1906 Մա-
յիս 31 ին Սպանիոյ Ալֆօնս ԺԳ. Թա-
զաւորը սպաննուող փորձ փորձող Մօ-
րալէսը, անձնասպան եղաւ արտի մը
մէջ ինչպէս գրած էինք մեր վերջին
թուով:

* *

Աւստրիոյ մէջ երեւցած պարբերա-
կան հրատարակութեանց ներկայ
թիւն է 3320. ասոնցմէ 172 ը ամե-
նօրեայ լրաթերթ են, 723 ը շաբա-
թական, 959 ը կիսամսեայ եւ 1102 ը
ամսական:

Աւստրիական մամուլը քիչ ժամա-
նակի մէջ ունեցած այս աճումը շատ
զարմանալի է, վասնզի 1848 ի յեղտ-
փոխութենէ առաջ, Աւստրիոյ մէջ
հրատարակուած թերթերու թիւն էր
միայն 79, այն է՝ 17 պաշտօնական
թերթեր, 2 քաղաքական, 34 արհես-
տական եւ 36 օրագիր ալ զուարճա-
կան:

Լրագիրներն արդէն ծանուցին այն
հանդիսակատարութիւնները որ տեղի
ունեցան այս օրերս. 2 վիցերիոյ եւ
Իտալիոյ մէջ եղած Սիմբոն լեոն
թունէլի աւարտման եւ պաշտօնա-
կան բացման առթիւ:

Ալբանի լեռանց շղիմներէն Իտա-
լիա անցնելու համար երեք ստորեր-
կրեայ երկամէ ճանապարհ կայ, ո-
րոց թունէլները եւրոպայի էն եր-
կարներէն են:

Այսպէս Մօն Սընիի թունէլը ունի
12 քիլոմէթր եւ 800 մէթր երկա-
րութիւն, Սէն Կոթարինը 14 քիլոմէթր
եւ 992 մէթր եւ նոր բացուած Սիմբ-
լօն լեռան թունէլը 19 քիլ. եւ
781 մէթր երկարութիւն:

Ռուսիոյ մէջ Հաճիէնիի երկա-
թուղւոյ կայարանապետը անցեալ շա-
բաթ օր մեռնողներու հոգւոյ համար
կոյիլա բաժնիք էր կայարանի պաշ-
տօնախնարներու եւ 12 զինուորակա-
նաց օր հոն կը գտնուէին հեռագրի
թելեր անցնելու համար:

Երկու ժամ յետոյ այն կոյիվայէն

—Արեան գին է այս... բացաքան-
չեց Կարիպ Ախպէր: Մեր գերդաստա-
նի ամբողջ կեանքը հոս է... Ախ,
այս ժանեակը, այս անգին մատանին
մօրս են, հայրս չէ՞ մոռցած յիշա-
տակելու զայն իր կտալագորին մէջ:
Հրէշ վայելառուն ատոնք առած ու
պահած է իր անիծեալ արկղին մէկ
անկիւնը:

Ու գաղտնաբար քարանձաւներուն
մէկուն մէջ մտաւ ու փոս մը փորե-
լով թաղեց տուփը: Միայն մերկ
կուրծքին վրայ գերդաստանի նշանա-
բանն եղող մատանին կախեց ու ան-
կից ուղղակի քաղաքը դիմեց: Գինեց
թուրք երիտասարդներու յատուկ հա-
գուստ մը, որ լայն փոթուած մը, Ա
ճէմ չալէ մը, սեւ ու կրունքը ճզճո-
ւած սօղ մը, երկայն ֆէսէ մը ու կար-
ճըկեկ սալթայէ մը կը բաղկանար:
Յետոյ ներկայացաւ նշանաւոր Մօլ-
լայի մը, որուն ապարանքը տաճկաց
թաղին մէջ էր:

ուսողներէն 20 հոգի թունաւորուած
ըլլալով սոսկալի ցաւերով կը տաճ-
ջուէին:

ՀԵՈՒԳՐԱԼՈՒՐԵՐ

Նիւ-Խօրք, 5 Յունիս

Քաղաքէն քիչ հեռու՝ ամբողջ
կառալմաբի մը ետեւ վակօնները
այրեցան իրենց մէջ գտնուող
ճամբարներով:

Պրէստ 6 Յունիս

«Փան տ'Արք» յաժանաւուն
նաւաստիները աղմկալից ցոյց
մը ըրին, և անոնցմէ 30 ը ա-
ռանց հրամանի ցամաք ելնելով
մերժեցին վերագառնալ նաւը:

Կ. Պօլսոյ, 6 Յունիս

Շէմսի փաշան առանց կռուե-
լալ Գարատաղի սահմանագլուխն
եզող Սօրցերի արեւմտեան զաւի-
վայրերուն տիրեց, և ապստամ-
բող քրիստոնեայիները փաշային
հրաւիրանաց համեմատ ետ քաշ-
ուեցան:

Բրօսչէնայէն մինչեւ Մօծքա-
վաքա տարածուող վեց պլօքհա-
ւուղներ տաճկաց ձեռքն անցան:
Չը յուսացուիր որ նոր ան-
կարգութիւններ ծագին:

Լօնտրա, 6 Յունիս

Թոքիոյէն «Թայմզ» կը հա-
ղորդեն որ ճաբոնական կառա-
վարութիւնը որոշած է երկու
զօրաբաժինով դբաւել Քօրէան:
Ի բաց առեալ Բօրթ Արթիւրը,
ճաբօնացիք 200,000 զօրքով գը-
րաւած են Մանչուրիան:

Բեթերպուրկ, 4 Յունիս

1905 ի յունիս 28 ին «Պօժէտովի»
թօրբիլանաւ առանց կռուելու
ճաբոնացւոց յանձնելուն համար,
պատերազմական ատեանի առա-
ջը պիտի դատուին Ռօժէսթվէնս-
քի ծովակալին սպայակոյտի եր-
կու սպաները իբր թելագորիչ
անձնատուութեան եւ ուրիշ ինը

Կարիպ Ախպէր իր այս արտակարգ
տարադին ներքեւ ա'յնքան փճիռե-
ցաւ որ նոյնիսկ վանահօրն անձանա-
չելի կը դառնար: Հօւժկու, աներ-
կիւղ ու աչքն ամեն բան առած երի-
տասարդի մը պէս Մօլլային ձեռքը
համբուրեց եւ ըսաւ:

—Մօլլա էֆէնտի, յսեցի որ 2 էֆի
պէյին ապարանքն գողեր մտած են ու
այդ պատճառաւ Ոստիկանապետը գաղտ-
նի լրտեսներ կը կայգէ զանոնք դըտ-
նելու համար: Կը խնդրեմ որ Ոստի-
կանապետին դիմէք ու ընտրելի ներ-
կայացուէք զիս:

Մօլլա խոժոռ նայուածք դէմը կե-
ցող երիտասարդին երեսը դալձուց ու
հարցոյց:

(Շարունակելի)



—Ես անոր սիրտ կուտամ ու կը խոս-
տանամ քիչ ատենէն վերադառնալ:

Այս խօսակցութենէն ետք՝ Վար-
սենիկ խուցին մէջ բացուած սենեկին
դուռը ճոցուց ու խնդութեամբ մը
լեցուած ներս եկաւ: Ձեռքը, որ կը
զողզողար, երկնցուց Կարիպ Ախպէր ու
թոթուեց անոր ձեռքերը:

—Վարսենիկ ես չեմ մոռնար քեզ,
ըսաւ Կարիպ Ախպէր, կաշխատեմ մայ-
րդ գտնելու դուն անհող եղի՛ր:

—Մայրս գտնելու բացազանչեց ման-
կամարդ աղջիկը՝ խղճուած ձայնով մը:
—Այո՛,

—Անիկա ո՛ւր է որ:

—Ամիս մ'առաջ գաղթած է խորթ
հօրդ հետ:

—Դէպի ո՛ւր:

—Առ այժմ յայտնի չէ՛. ես ժամա-
նակ մը պիտի հեռանամ ասկից ու ա-
նոնց ո՛ւր ըլլալը պիտի հասկնամ:
Ի՞նչն այս խուցէն բնա՛ւ դուրս մնինք
ու սիրտդ զուարթ պահէ՛: Ահա՛ ին-
տուծոյ նուիրական տաճարին դուռն

ինկած ես. աղօթէ՛ որ յաջողութեամբ
պարտականութիւններս կատարեմ ու
քեզ ալ երջանիկ կեանք մը պատրաս-
տեմ սիրելիներուդ չուքին ու գորով-
ներուն ներքեւ:

—Կաղօթե՛մ, ախ, կ'աղօթե՛մ...
հեծկուաց Վարսենիկ ու անոր աղ-
ւոր գծալի աչքերուն մէջ արցունքը
չողաց՝ բիւրեղի ու մարգարտի հա-
տիկներու պէս Թրթռո՛ւն ու հմայիչ:

Կարիպ Ախպէր դուրս ելաւ: Յու-
զուած ու ցաւատա՛նջ վրձակի մը մէջ
հեռացաւ Վարազայ ժեռուտ ու ամենի
քարանձաւներու կողմն ու ապահով
տեղ մը նստեցաւ: Ան ատեն ծոցէն
հանեց պզտիկ ու ծանրկեկ տուփն, ո-
րուն կղպանքին ծակէն բանալի մը
անցած կը մնար: Բացաւ այդ տուփն
ու տեսաւ որ լեցուն ռուսական ու
ֆրանսական զրամատոմսեր կային ա-
նոր մէջ մօտաւորապէս տասը հազար
ռսկիի գումար մը: Նոյնպէ՛ս մանակ
մը ու ծանրագին մատանի մը պահուած
էին հոն:

սպայներ ևս որ անոնց խորհուրդին հետևած են :

Ռոստիսլավիչի ծովակալը նույնպէս պատերազմական ատեանը պիտի դատէ չընդգիծման լուծն համար յանձման թօրփլանաւին, որոյ մէջ կը գտնուէր ինքը ծանրապէս վիրաւորեալ :

Մատրիտ, 6 Յունիս

Թագաւորի դէմ մահափորձի օրը քաղաքապետական պալատի մօտ գտնուած տուփը կը պարունակէր վառօդ և երկաթի կտոր տուք :

Ս'եռնոններու և վիրաւորեալներու թիւը ոտաթկանութեան խուզարկութեանց համեմատ հասած է 101 ի :

Բեթերսպուրկ, 6 Յունիս

Հողագործական խնդրոյ վերաբերող խռովութիւններ տեղի ունեցան անցեալ շաբթուան մէջ ամեն կողմ, գլխաւորաբար Սարաթովի, Վօրոնէժի և Կրօտնոյի նահանգաց մէջ, ուր ոպառնական հանգամանք ունեցան :

Երկրին այլ և այլ կողմերէ հասած լուրերը կրօնէի շինականք՝ որոշած են կալուածատէրներու հողերը իրենց մէջ բաժնել, եթէ ճուման չկարողանայ հողագործական խնդիրը կարգադրել :

Լրագիրները կը յայտնեն թէ կառավարութիւնը չափել տուեր է մէկուկէս միլիօն Տէսիաթին հող Վօլկա գետին ալ եզերքն եղող արքունի ստացուածքէն և պիտի բաժնէ հող չունեցող շինականաց :

Ս. Բէթերսպուրկ, 6 Յունիս

Հետզհետէ ամէն մողմէ հասած հեռագիրները լուր կուտան թէ բազմաթիւ միթինկներու մէջ ժողովուրդը պատրաստակաութիւն կը յայտնէ ճուման պաշտպանելու համար : Նոյն իսկ ընկերվարականները որ առաջ ճումային հակառակ էին, հիմայ զանի կը պաշտպանեն :

Ռէլ լրագիրը այս եղելութիւններէն կենթադրէ թէ յեղափոխութիւնը տարածուելու վրայ է, եւ կը յայտնէ թէ իրաց յեղաշրջումը խիստ մօտակայ է, եթէ ճուման արգի նախարարութենէն չազատէ իր օձիքը :

Դիւանաբռնական շրջանակաց մէջ՝ մանաւանդ պալատական անձնաւորութեանց միջև քիչ շատ յանձնապատասխանութիւն կայ ճուման լուծել կողմի : Բերնէ բերան կը պատին սա խօսքերը իբր թէ Կայսրը ըսած ըլլայ Կօրըմիքինին, «ճուման քու վրադ վստահութիւն չունի, սակայն ես վստահ եմ քեզ » :

Բեթերսպուրկ, 6 Յունիս

Ազատական լրագիրները կը

յայտնեն թէ Կօրըմիքինի նախարարութիւնը անհնար է որ կարենայ տեղի :

Նովոյէ Վրէմիա իսկ կը խոստովանի որ ազգին վտահութիւնը գրաւելու կարող նախարարութիւն մը անհրաժեշտօրէն հարկաւոր է : Բայց այսպիսի նախարարութիւն մը անհնար է գտնել այն դիւանաբռնական կուսակցութեան մէջ՝ որ թէ՛ ջարդ և թէ՛ ժողովուրդը խաբեց, և Ռուսիան ալ ամօթով ծածկեց :

Դիւանաբռնութիւնը հարկ է խտարէն քննադատել : Բարլամէնթին և Կայսեր վստահութիւնները միասին վայելող նախարարութիւն մը միայն կրնայ զօրաւոր ըլլալ և Ռուսիան հանգարտեցնել :

Թիէն-Չին 7 Յունիս

Լուր կը պտտի որ Չինի կայսրը ինչպէս նաև Մայր-Կայսրուհին ծանր կերպով հիւանդացեր են : Այս լուրը գաղտնի ընկերութեանց մէջ մեծ տագնապ յարուցած է որովհետեւ կրնայ կայսրութեան ցեղային փոփոխութիւն մը յառաջացնել :

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Բեքեդպուրկի Վեռնուս Բուս լրագրի Կ. Պօլսոյ թղթակիցը կը սէ որ իզմիրի զօրանցներուն մէջ այս վերջին ատենները մեծամեծ անկարգութիւններ տեղի ունեցած են :

Յիշեալ թղթակիցը Թէվֆիկ փաշային այցելած միջոցին տեսեր է, որ զօրքերը զօրանցի բազին մէջ խմբուած կատաղի ատելութեան մը ցոյցեր կարտայայտէին իրենց հրամանատարաց դէմ, բարձրաձայն կը բողբէին եւ նոյն իսկ կը հայհոյէին անոնց : Մէկ խօսքով ապստամբական դիրք մը առած էին, և այս ամենը անոր համար՝ որ ութ միսէ ի վեր ամսական չէր տըրուած զօրաց :

Թէվֆիկ փաշա իր ապարանքէն դուրս գալով զօրաց մօտ եկեր է, եւ երբ սպառնացեր է անոնց՝ իրենց անկարգ ընթացքը պարսաւելով, զօրքերն այն ատիժան բարկանալով յարձակեր են փաշային վրայ, որ հաղիւ կրցեր է մաղապուր ազատի անոնց ձեռքէն, այն ալ շնորհիւ նահանգական գտնապահին վազելով բերած մի երկու քսակ ոսկիներուն որ գանձապահը բաժնէր է զօրաց, և կարողացեր է ասով քիչ մը հանդարտեցնել զիրենք :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սօֆիայէն 22 Մայիսի գրուած նամակ մը կըսէ թէ Վառնայի

նաւահանգստի բացման առթիւ, Ֆէրտինանտ իշխանը առաջին անգամ ըլլալով Պուլկարական նաւախումբին գլխաւոր հրամանատարի տիտղոսն առաւ, և հրամանագիր մը հրատարակել տուաւ որոյ համեմատ այսուհետեւ Պուլկարի Նաւատորմի զինուորի կոչուի Վնորին Արքայական Բարձրութեան նաւատորմիլը :

Նոյն նամակը կըսէ նաեւ թէ պատերազմական վարչութիւնը որոշած է Վառնայի նաւահանգիստը տեսակ մը պատերազմական նաւահանգիստի ձեւ տալ ամրոցներ հաստատելով անոր շուրջ : Ասկէ զատ նոյն վարչութիւնը Վառնայի նաւահանգիստը Տէվիայի լճին հետ հաղորդակցութեան մէջ պիտի դնէ ջրանցք մը փորել տալով, որոյ համար Սօֆրանիէն արդէն իւր անցեալ նստաշրջանի մէջ որոշած էր 1,200,000 ֆրանք ծախք :

—Ն. Ա. Բ. Բլէմանթին իշխանուհին, մայր Պուլկարիոյ գահակալ Ֆէրտինանտ իշխանի, իւր ութսունամեայ տարեդարձի առթիւ Աւստրիոյ Ֆրանց Եօզէֆ կայսրէն Ս. Երիզապէթի Ա Կարգի պատուանշանը ստացեր է :

—Սօֆիայէն քաջուած հեռագիր մը մեզ կը տեղեկացնէ, որ այն քաղաքի մէջ հրատարակուող լրագրաց խմբագրութիւնները, Ֆէրտինանտ իշխանը և մի քանի քաղաքական անձնաւորութիւնք, Մոսկվայի բարեգործական Սլավ ընկերութեան հեռագիրները ստացեր են, թէ ընկերութեան նախագահ Մ. Սերիտոնովիչի որոշեր է Ռուս կառավարութեանէն պահանջել որ Ռուսիայ մէջ գտնուող Յունաց արգիլէ ստակ հաւաքել Մակեդոնիոյ մէջ զինեալ յունական խումբեր կազմելու համար :

Ա Ն Ք Ղ Ի Ա

Անգղիական Նաւատորմին առաջնակարգ զրահաւորներէն մին «Մօնթէկիւ» անցեալ օր առաւօտեան դէմ խիստ մշուշի ատեն ընկղմելու աստիճան խրեցաւ Պրիսթլի շրանքին մէջ : Շատ պատերազմական նաւեր և նաւաձիգ շոգեմաւեր երկար աշխատութիւններէ ետքը չկարողացան «Մօնթէկիւ» ազատել, եւ այժմ այս ամենագեղեցիկ զրահաւորը կը նկատուի իբր բոլորովին կորսուած :

«Մօնթէկիւ» մէջ որ 800 սպայ և նաւազ կար, ցամաք հանուեցան : Արկածի ատեն մարդու կորուստ չեղաւ, միայն մի քանի նաւազներու բազուկները կտորեցան, և մի քանիսին ալ ծունկերը ճմլուեցան :

«Մօնթէկիւ» նոր էր և մէկուկէս միլիօն Անգղիական ոսկիի ծախքով չինուած էր :

ԹԻԻՃՃԱՐԻՑԻ

ՎԱՌՆԱ, 31 Մայիս
ՋԱՆԻՐԷ

ՊՈՒՂՏԱՅ		
Վազօն	54-60 լիպ.	9.30/10.40
Արապա	52-62 լիպ.	9. /11.20
ԱՐԲԱ,		
Վազօն 100 քիւօ	12	—/12.60
Արապա	42-47 լիպ.	7.80/8.
ԵՈՒԼԱՅ արապա 33/36 լիպ.	4.40/5.	
» 100 քիւօ	10.20	/10.40
ՋԱՍՈՒԼԵՆ արապա	հօգ	
ՅԱՍՈՒԼԵՆ արապա	հօգ	
ՌԱԲԻՑԱ	100	— 12.26
Արապա	100 քիւօ	7.80/8.
ՏԱՐԸ արապա	—	10/11.20
ԲՕԼՕԶ արապա 55-60 լիպ.	11./12.	
ՄԻՍԻՐ 57-58 լիպ.	առապա 7. /7.40	
» 100 քիւօ	1.250/13.	
Կիւնտէ 2-3 վազօն	վէ 8-10	
արապա կէլմէքտէ . վազօն մուամէլէսի	նաքօլէօն 20 ֆր.	արապա մուամէլէսի նաքօլէօն 20. 20

ՊԱԳԱԼԻՑԷ

Վարնա քիւնտէրնա	պազգալիյէ մալլէրին պու կիւնքի ֆիլյաթը, ալթուն ֆրանք իլէ :	
ԳԱՀՎԷ	2.10/	2.25
ՇԷՔԷՐ Նէմցէ		.81
ՇԷՔԷՐ քէսմէլ	սանտրդ	41.
ԲԻՐԻՆԸ ձէնօվա չուվալը		42.
» Գիւնպէ	»	36.—36/35
» Ինկիլիզ	»	29. 50
Բիզօ	»	49.
ԿԱԶ Սանտրդ		10. 40
ՁԷՑԻՆ Ետը քիւօ		90—1.
ԳՈՒՐՈՒ Իւզիւմ		25—25/35
Եուսուրթա	100	ատէթի 4. 40

«ՋԱՅՆ» ՀԱՅՐԵՆԵԱՅ

Այս մեծածաւալ շաշմաթերթը յեղափոխական շրջան յօդուածներ, քննադատականներ եւ ազգային ու քաղաքական լուրեր կը պարունակէ. Արտասահմանի համար տարեկան բաժնիքին է 12 ֆր. կանխիկ . Հասցէն է՝

Արմենեան Բիւրոյի խմբակ քօ.

Բ. Օ. Պօքս 1731, Պօքսըն, Մաւ-
[Ամերիկա]

Կարելի է բաժանորդագրուիլ նաեւ Իրաւունքի խմբագրութեան միջոցաւ :

ԸՆՏԻՐ ԲՍՑԱԽ

Ջուտ խաղողէ պատրաստուած քնական քացախի նորահաստատ մեր մթերանոցը առիթ կընծայէ յարգոյ հասարակութեան որ ասկէ յետոյ զերծ մընայ խարբախեալ այլ եւ այլ զեղերով պատրաստուած կեղծ քացախներու վերանորոգէն : Մեր քացախին անարատութիւնը եւ ազդեցութիւնը ամեն երաշխիք կընծայէ իր առողջութեան նախանձախնդիր յաճախորդին, որ անգամ մը փորձելով արդէն հաստատած պիտի ըլլայ զերազանցութիւնը :

Դուրսէն մեծաքանակ յանձնարարութիւնք փութով կը գործադրուին ի հարկին նմոյշ դրկելով :

Հասցէ՝ ԱՐՄԵՆԱԿ ԳԱՍԱՊԵԱՆ
Դ. Թաղ փողոց Գօլօնի Թիւ 65 ՎԱՌՆԱ

Одговорникъ А. Курбетянъ
редакція в Д. Тодоровъ и С-не—Варна.